ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
0033, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 78, հեռ.՝ 060 469200, ֆաքս՝ 27 30 97, e-mail: info@yermetro.am

N 08-S «25» 09 2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ» ՓԲԸ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ-Ի

թիվ 08-S

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն, ուսումնասիրելով ԵՄ-ԳՀԱՊՁԲ-24/77 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 25.09.2024թ-ի զեկուցագրով ԱՁ Վոլոդյա Նիկողոսյանին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերը, *պարզեցի հետևյալը*.

1. Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից ներկայացրած փաստերը և պահանջը.

1. Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը Պատվիրատուի ղեկավարին ուղղված 25.09.2024թ-ի զեկուցագրով հայտնել է հետևյալը.

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար 2024 թվականի հունիսի 3-ին հայտարարված Ընթացակարգի շրջանակում մասնակցության հայտ է ներկայացրել նաև ԱՁ Վոլոդյա Նիկողոսյանը, որի կողմից ներկայացված հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է սահմանված պահանջներին բավարարող:

Հետագայում՝ Ընթացակարգի շրջանակում 24.09.2024թ-ին ՀՀ Պետական վերահսկողական ծառայության կողմից ստացված **№ Ե/2264-24** գրությունը, համաձայն որի՝ համաձայն որի՝ «...Տեղեկագրում հրապարակված գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Արամայիս

Վոլոդյայի Նիկողոսյանը (ՀՎՀՀ՝ 26549271) 2023 թվականի հոկտեմբերի 17-ից մինչև 2025 թվականի հոկտեմբերի հոկտեմբ 17-ը ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնացների ցուցակում: Ուշագրավ է այն, որ անհատ ձեռնարկատեր Վոլոդյա Արամայիսի Նիկողոսյանի և անհատ ձեռնարկատեր Արամայիս Վոլոդյայի Նիկողոսյանի միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2024 թվականի սեպտեմբերի 18-ին N/26.1/37262-2024 գրությամբ Ծառայությանը տրամադրված տեղեկատվության համաձայն Վոլոդյա Արամայիսի Նիկողոսյանը հանդիսանում է Արամայիս Վոլոդյայի Նիկողոսյանի հայրը:

...Համաձայն ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 119-րդ կետի 3-րդ ենթակետի բ) պարբերության՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝ ֆիզիկական անձի կարգավիճակ չունեցող մասնակիցները համարվում են փոխկապակցված, եթե նրանցից մեկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տիրապետող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող մասնակիցը (բաժնետերը) և (կամ) մասնակիցները (բաժնետերերը) կամ նրանց ընտանիքի անդամները (եթե մասնակիցը ֆիզիկական անձ է) իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետել (այդ թվում՝ առուվաճառքի, հավատարմագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրերի, հանձնարարականի կամ այլ գործարքների հիման վրա) մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին կամ ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն:

Կարգի 120-րդ կետի համաձայն սույն կարգի 119-րդ կետի իմաստով **ընտանիքի անդամ են** համարվում **հայրը**, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, թոռները, քրոջ կամ եղբոր ամուսինն ու երեխաները:

Կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ Պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը...»:

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, **<u>գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում</u>**: ... »:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ առաջարկում ենք ԱՁ Վոլոդյա Նիկողոսյանին, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով կայացնել պատճառաբանված որոշում և հիշյալ որոշումը գրավոր ուղարկել ՀՀ

Ֆինանսների նախարարություն՝ ԱՁ Վոլոդյա Նիկողոսյանի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

2. Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար 2024 թվականի հունիսի 3-ին հայտարարվել է Ընթացակարգ, որի շրջանակում մասնակցության հայտ է ներկայացրել նաև ԱՁ Վոլոդյա Նիկողոսյանը, ում կողմից ներկայացված հայտը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է սահմանված պահանջներին բավարարող:

Հետագայում՝ ընթացակարգի շրջանակում 24.09.2024թ-ին ՀՀ Պետական վերահսկողական ծառայության կողմից ստացված **№ Ե/2264-24** գրությունը, համաձայն որի՝ համաձայն որի՝ «...Տեղեկագրում հրապարակված գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Արամայիս Վոլոդյայի Նիկողոսյանը (ՀՎՀՀ՝ 26549271) 2023 թվականի հոկտեմբերի 17-ից մինչև 2025 թվականի հոկտեմբերի հոկտեմբ 17-ը ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնացների ցուցակում: Ուշագրավ է այն, որ անհատ ձեռնարկատեր Վոլոդյա Արամայիսի Նիկողոսյանի և անհատ ձեռնարկատեր Արամայիս Վոլոդյայի Նիկողոսյանի միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2024 թվականի սեպտեմբերի 18-ին N/26.1/37262-2024 գրությամբ Ծառայությանը տրամադրված տեղեկատվության համաձայն Վոլոդյա Արամայիսի Նիկողոսյանը հանդիսանում է Արամայիս Վոլոդյայի Նիկողոսյանի հայրը:

...Համաձայն ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 119-րդ կետի 3-րդ ենթակետի բ) պարբերության՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝ ֆիզիկական անձի կարգավիճակ չունեցող մասնակիցները համարվում են փոխկապակցված, եթե նրանցից մեկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տիրապետող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող մասնակիցը (բաժնետերը) և (կամ) մասնակիցները (բաժնետերերը) կամ նրանց ընտանիքի անդամները (եթե մասնակիցը ֆիզիկական անձ է) իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետել (այդ թվում՝ առուվաճառքի, հավատարմագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրերի, հանձնարարականի կամ այլ գործարքների հիման վրա) մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին կամ ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն:

Կարգի 120-րդ կետի համաձայն սույն կարգի 119-րդ կետի իմաստով **ընտանիքի անդամ են** համարվում **հայրը**, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, թոռները, քրոջ կամ եղբոր ամուսինն ու երեխաները:

Կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ Պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի

կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը...»:

3. Պատվիրատուի ղեկավարի հիմնավորումները և եզրահանգումը.

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի ժ/պ Բ. Սեդրակյանս (այսուհետ՝ Պատվիրատուի ղեկավար), ուսումնասիրելով Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից ներկայացված զեկուցագիրը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, **գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում**:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Այսպիսով՝

ԱՁ Վոլոդյա Նիկողոսյանի կողմից «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարված Ընթացակարգին ներկայացվել է մասնակցության հայտ:

ԱՁ Վոլոդյա Նիկողոսյանի փոխկապակցված անձանց գնումների գործընթացին իրավունք չունենալու վերաբերյալ ստացվել է տեղեկատվություն ՀՀ Պետական վերահսկողական ծառայության կողմից:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից նախաձեռնվել է ընթացակարգ, վերոնշյալից ելնելով ձեռնարկվել են միջոցներ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից ներկայացրած հիմքերը՝ ԱՁ Վոլոդյա Նիկողոսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում ներառելու համար, գնահատել բավարար:

2. ԱՁ Վոլոդյա Նիկողոսյանի ներքոնշյալ տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, ԱՁ Վոլոդյա Նիկողոսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով.

Մասնակցի						
Անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
ԱՁ Վոլոդյա Նիկողոսյան	25398772	ք. Երևան, Ավան, Նարեկացի 54/9	X			25.09.2024թ. ԵՄ-ԳՀԱՊՁԲ-24/77

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ **Բ. ՍԵԴՐԱԿՅԱՆ**